Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Lün
154

1999

# ԱՅՏԱ

ԼԷՕԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

# ԱՅՏԱ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ
Ի ՉՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ ԵՒ ՅԵՕԹՆ ՊԱՏԿԵՐՍ
ԲԱՐԲԱՌ ՇԻՉԼԱՆՑՈՆԻԻ

ՅՕՐԻՆԵԱԼ ՀՐԱՄԱՆԱՒՆ
ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ
ԽԸՏԻՒԻՆ
ԵԳԻՊՏՈՍԻ

Եւ առաջին անգամ ներկայացեալ Գահիրէի թատրոնը, 1871 դեկտեմբեր ամսոյն մէջ:

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ
'ի գաղղիական լեզուէ
ԿԱՐԱՊԵՏ Պ. ՃԷՐԻՏՃԵԱՆ

Զմիւռնիա

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ
1872

1553
Гос. Библ. ՀԱՍՀ ... ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՆՈՒԷՐ ՍԻՐՈՅ

եւ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԱՌ

ԵՂԲԱՅՐՆ ԻՄ

ԾԱՏՈՒՐ Դ. ՇԷՐԻՏՃԵԱՆ

ԼԷՕԻ ԳՐԱԴԱՐԱՆ

2ֆ 160 4154-60

Եղբայր իմ,

Մանկութենէ 'ի վեր 'ի քեզ գտայ ինչ որ հարկաւ պիտի վայելէի հօր մը սիրոյն եւ գգուանքին մէջ. հայր մը՝ զոր, եղո՜ւկ, հազիւ թէ ճանչցի, իր մահուանէ ետք զքեզ թողուց, իր անդրանիկ զաւակն, իբր յաջորդ իր պարտաւորութեան:

Եւ ստուգիւ, թէպէտ, տակաւին երիտասարդ, անոր հոգերուն պարուրեցար՝ սակայն, բազմանդամ ընտանիքի մը վիճակը բարելաւելու եւ անոր գլխաւորին անդարձ բացակայութիւնը կերպիւ իւիք գոցելու դժուարութեանը չափ մեծ եղաւ քու ժուժկալութիւնն ու բոլոր ջան 'ի գործ դնելու յարատեւութիւնդ, եւ, որ բազմապատիկն է, առ իս փոքր 'ի շատէ ուսմունք մը քաղելու մասին ունեցած փոյթդ:

Այն զգացումներն են որ դրդեցին քեզ թողուլ հայրենիք, ընտանիք, ....ամէն բան, եւ գալ փնտռել միեւնոյն բաղդը միեւնոյն երկրին մէջ, ուր մեր հայրն 'ի նանիր որոնեց երբեմն, եւ ճիշտ, լաւագոյն ապագայի մը հասնելու երազովն, իր վերադարձին ծովերու տակ գտաւ իր գերեզմանը: Այն տեղ կ'ուզէի քանդակել արտասուքի մը հետ զոնէ երկու խօսք իբր յիշատակ որդիական սիրոյս... չ'ունիմ այն մխիթարութիւն, եւ ոչ դու, բայց 'ի քեզ կ'տեսնեմ, ինչպէս միշտ տեսայ, անոր սիրտն ու հոգին, եւ իմ երախտագիտութեան ու

սիրոյն իբր յիշատակ, հօր մը անունովը քեզ կ'ընծայեմ նոյն իսկ քեզնէ սերմանուած ծուանի մը երախայրիք:

Այտայի թարգմանութիւնը, պարապոյ ժամերուս միարդիւնք, առ. քեզ իբր նուէր բաւական չէ թէեւ փոխարինել այն խնամքդ, սէրդ ու սրտակցութիւնդ որով այստեղ, օտար երկնի մը ներքեւ, հայր՝ եղբայր՝ բարեկամ ես ինձի. բայց դու լաւ գիտես թէ՝ չունիմ ուրիշ բան մը, կամ թէ ունիս ինչ որ ունիմ, որպէս զի յարակայ ընծայ մը քեզ ընելով՝ կարենայի բան մը ինձնէ քեզի տուած ըլլալ:

Ուստի փնտռեցի եւ լաւագոյն գտայ, սոյն կէտին հայրենի լեզուով գոհացնել ողբերգութեան համար ունեցած ճաշակդ:

Եղբայրդ . ԿԱՐԱՊԵՏ

Գահիրէ․ 1 փետրուար․ 1872





## ԱՆՁԻՆՔ

**ԹԱԳԱՒՈՐՆ** ։
**ԱՄՆԷՐԻՍ**, անոր աղջիկը ։
**ԱՅՏԱ**, Եթովպացի ստրուկ ։
**ՌԱՏԱՄԷՍ**, զօրապետ ։
**ՌԱՄՓԻՍ**, քրմապետ ։
**ԱՄՕՆԱՍՐՕ**, Թագաւոր Եթովպիոյ, հայր Այտայի ։
**ԹԷՐՄՈՒԴՀԻՍ**, քրմապետուհի ։
**ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ՄԸ** ։

Քրմունք, Քրմուհիք, Պաշտօնեայք, Հազարապետք, Զինուորք, Եթովպացի ստրուկք, կալանաւորք, եւ Եգիպտացի ժողովուրդ ։

Դէպքը Մեմփիսի եւ Թեբէի մէջ տեղի կունենայ, փարաւոն Թագաւորներուն տիրապետութեան ժամանակ ։

# ԱՐԱՐՈՒԱԾ Ա

## ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

## ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱԼԱՏԻՆ ՄԷՋ ՊԱՐՏԷԶ, Ի ՄԷՄՓԻՍ

Թագաւորին վրանը, երկու կարգ փայտեայ սիւներով ։ Ծաղիկներու Բազուկներ եւ Բուսեր բոլոր տեսարանը կ'զարդարեն ։ Հեռուն՝ մէջ տեղը Եգիպտոսի մշակուած դաշտավայրը կ'երեւնայ, և աւելի հեռուն՝ անապատն ու բուրգերը ։

### ՌԱՏԱՄԷՍ ՌԱՄՓԻՍ

**ՌԱՄՓԻՍ**

Այո՛, տարաձայնութիւն կայ թէ՝ Եթովպիա զայրացեալ ոտք կ'ելնէ տակաւին, և կսպառնայ Թէբէի և Նեղոսի հովտին վրայ ։ Սուրհանդակ մը հիմակ մեզի բերաւ այս լուրը ։

**ՌԱՏԱՄԷՍ**

Իզիս սրբազնոյն խորհուրդ հարցուեցա՞ւ ։

**ՌԱՄՓԻՍ**

Նոյն ինքն է որ անուանեց Եգիպտական գումարտակաց բարձրագոյն հրամանատարը ։

### ՌԱՏԱՄԷՍ

Ո՛հ, երանի՛ անոր ։

### ՌԱՄՓԻՍ

(Խորհրդաւոր կերպիւ իր նայուածքը Ռատամէսի վրայ սեւեռելով։) Անիկա երիտասարդ է ու քաջ....։ Հիմակ աստուածուհւոյն պատգամը թագաւորին պիտի տամ։ (Կ'ելնէ)

### ՌԱՏԱՄԷՍ, առանձին

Ա՛հ, թէ ե՛ս ըլլայի այն պատերազմականը. թէ իմ երազն իրանա՛ր...։ Քաջերու բանակ մը ինձմէ առաջնորդեալ... Հապա յաղթութի՛ւնը...։ Հապա ամբողջ Մէմփիսի այն ծափահարութիւննե՞րը...., և, ո՛վ իմ անուշ Այտա, յաղթութեան պսակներով ծածկուած՝ քեզի վերադառնալ և ըսել..... Քեզի՛ համար պատերազմեցայ, քեզի համար յաղթեցի...։ Զքնաղդ Այտա, ո՛վ գեղեցկութի՛ւն երկնատիպ, ո՛վ լուսային և ծաղկալից պսա՛կդ խորհրդաւոր, դո՛ւ իմ կենաց պայծառութիւնն ես։ Ա՛հ, կ'ուզէի գեղեցիկ երկինդ և հայրենեացդ անուշ հովերը քեզի վերադարձնել, արքայական թագ մը գլխոյդ վրայ դնել, և քեզի՛ համար աթոռ մը կանգնել արեգական մօտ։

---

## ՆՈՅՆՔ ԵՒ ԱՄՆԷՐԻՍ

### ԱՄՆԷՐԻՍ

Ի՞նչ տարօրինակ հուր մ'է այդ քու ակնարկի մէջ։ Ի՛նչ ազնիւ հպարտութեամբ մը դէմքդ պայծառացեր է։ Ո՛հ, քանի՜ն նախանձի արժանի է այն կինն որու ցանկալի տեսքն այդպիսի ուրախութեան նշոյլներ կ'ցայտէ սրտիդ մէջ։

### ՌԱՏԱՄԷՍ

Սիրոս բարերջանիկ երազով մը կ'զուարճանայ։ Աստուածուհին այսօր արտասանեց այն պատերազմականին անունը, որ



Եգիպտական զունդերը ճակատամարտ դաշտին վրայ պիտ'առաջնորդէ։ Ա՛հ, թէ ե՛ս ըլլայի կանչուած այսպիսի պատուոյ մը...։

### ԱՄՆԷՐԻՍ

Չկա՞յ ուրիշ աւելի անուշ, աւելի հեշտալի երազ մ'արդեօք որ քու սրտի մէջ ձայն տայ։ Չունի՞ս միթէ Մէմփիսի մէջ ցանկութիւններ, ակնկալութիւններ։

### ՌԱՏԱՄԷՍ

Ե՞ս...։ (Ի՛նչ հարցմունք...։ Թերեւս կ'գուշակէ սիրտս բորբոքող այն գաղտնի սէրը։ Իր ստրուկին անունը կ'կարդացու՞ միթէ իմ մտքի մէջ։)

### ԱՄՆԷՐԻՍ

(Ո՛հ, աղէ՛տք եթէ ուրիշ սէր մը իր սրտի մէջ կ'վառի, աղէ՛տք եթէ ակնարկս այն դուժալի գաղտնիքը թափանցէ։)

---

## ԱՅՏԱ ԵՒ ՆՈՅՆՔ

### ՌԱՏԱՄԷՍ, տեսնելով զԱյտա.

Ա՛ն է։

### ԱՄՆԷՐԻՍ

(Կ'վրդովի՛.... և ի՛նչ նայուածք էր նետեց անոր վրայ Այտայ...։ Սիրոյ թշնամուհի մ'ունիմ...գուցէ այս կինն է։) (Կարծ լռութենէ մը վերջ դէպ 'ի Այտայ կ'յառաջանայ։) Եկո՛ւր, ո՛վ սիրելիդ իմ, մօտեցի՛ր. դու ո՛չ գերի ես և ո՛չ աղախին, քանի որ՝ հոս, սիրալիր մտերմութեան մը մէջ, քոյրս կ'կոչեմ զքեզ...։ Կը լա՞ս... այդ քու արտասուաց գաղտնիքն իմացո՛ւր ինձ։

### ԱՅՏԱ

Թշուա՛ռս...։ Պատերազմին բարբարոս գոչիւնները կ'լսեմ...։ Տարաբաղդ հայրենեա՛ցս համար... ինձի համար.... ձեզի՛ համար.... կ'դողամ։

ԱՄՆԷՐԻՍ

Իրա՞ւ կ'ըսես ։ Աւելի մեծ մտատանջութիւն մը ներսդ չ'յուզեր միթէ ։ (Այսու՝ աչերը կ'խոնարհէ, և իր վրդովը կեղծելու կ'ջանայ ։)

ԱՄՆԷՐԻՍ

(Դողա՛, ո՛վ յանցաւոր գերի ։ ո՛հ, դողա՛ որ չթափանցեմ սիրտդ ։ դողա՛ որ չ'գտնեմ այդ արտասուաց և անձկի ճըշմարտութիւնը ։)

ԱՅՏԱ

(Ո՛չ, սիրտս հայրենեաց սիրոյն համար միայն չ'հառաչեր ։ դժբաղդ սիրոյ մը արտասուքն ալ կ'հոսէ ։)

ՌԱՏԱՄԷՍ, Ամնէրիսին նայելով։

(Իր դէմքին վրայ կ'շողան սրտմտութիւնն ու կասկածը, վա՜յ մեզ՝ եթէ մեր սէրն սրտերնուս մէջ կարդացուի ։)

ԹԱԳԱՒՈՐԸ՝ առջեւէն իր թիկնապահ զօրքը, ետեւէն ՌԱՄՓԻՍ, պաշտօնեայք, քրմունք, հազարապետք ևն., պալատական հազարապետ մը, յետոյ սուրհանդակ մը։

ԹԱԳԱՒՈՐՆ

Սախաղական իր մը կ'ժողովէ զձեզ, հաւատարիմ եգիպտացիք, հո՛ս, ձեր Թագաւորին բոլորտիքը ։ Եթովպիոյ սահմաններէն սուրհանդակ մը եկաւ հասաւ ։ Ծանր լուրեր կ'բերէ ։ Հաճեցէք իրեն լսել . . . (հազարապետին մը) Թո՛ղ յառաջ անցնի բանբերը ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆ

Եգիպտոսի նուիրական հողը գրաւեալ է բարբարոս Եթովպացիներէն ։ Մեր գիւղերը կատարելապէս յաւեր 'ի քանդ ըլլած, հունձերն այրած են, և աւարառու թշնամիք դիւրին



յաղթութեամբն համարձակութիւն գտնելով արդէն կ'ընթանան Թէբէի վրայ ։

ԱՄԵՆՔՆ ԱԼ

Ի՛նչ ժպրհութիւն ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆ

Կատաղի աննկուն պատերազմիկ մը, զանոնք կ'կառավարէ . . . ։ Ամոնասրօ՛ . . . ։

ԱՄԵՆՔՆ

Թագաւո՛րը ։

ԱՅՏԱ

(Հա՛յրս ։)

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆ

Արդէն Թէբէացիք 'ի զէն վառեալ, հարիւր դռներէն դուրս կ'վազեն բարբարոս յարձակիչներուն վրայ՝ պատերազմի և մահու գոչիւններով ։

ԹԱԳԱՒՈՐՆ

Այո՛, սա՛ է մեր գոչումն, Պատերա՛զմ ու մա՛հ ։

ԱՄԵՆՔՆ

Պատերա՛զմ, պատերա՛զմ ։

ԹԱԳԱՒՈՐՆ

Սոսկալի՛, անողո՛ք ։ (Ռատամէսի մօտենալով) Պատուաշուք Իզիսն արդէն նշանակեր է մեր անընկճելի զօրաց գունդին ընդհանուր սպարապետն, զՌատամէս ։

ԱՄԵՆՔՆ

Ռատամէ՛ս ։

ՌԱՏԱՄԷՍ

Փա՛ռք աստուծոց. ուխտերս կատարեցան ։

### ԱՄՆԷՐԻՍ

Անիկա՛, ընդհանո՛ւր ազարապետ ։

### ԱՅՏԱ

(Կ'դողամ · · · · ։)

### ԹԱԳԱՒՈՐՆ

Հիմակ, դէպ 'ի Վուլքէնի մեհեանը յառաջացիր, ո՛վ քաջդ։ Կապէ' մէջքդ նուիրական զէնքերը և Թո՛ւ 'ր 'ի յաղթանակ ։ Քաջալերութի՛ւն, Նեղոսի սուրբ ափանց վրայ վազեցէ՛ք, ո՛վ Եգիպտացի դիւցազունք, և բոլոր սրտեր սա աղաղակն արձակեն Թո՛ղ. 'ի տար աշխարհ, պատերա՛զմու մա՛հ։

### ՌԱՄՓԻՍ եւ ՔՐՄՈՒՆՔ

Փա՛ռք պատի՛ւ աստուծոց . խրաքանչիւր ոք Թո՛ղ յիշէ Թէ անո՛նք կ'կառավարեն պատահարները, Թէ՝ երկնային զօրութենէ կախում ունի պատերազմողաց բաղդը ։

### ՊԱՇՏՕՆԵԱՅՔ եւ ՀԱԶԱՐԱՊԵՏՔ

Քաջալերութի՛ւն, Նեղոսի սուրբ ափանց վրայ պատնէշ մը կանգնե՛նք մեր կուրծքերով. միմիակ գոչիւն մը Թո՛ղ որոտայ, 'ի տա՛ր աշխարհ, պատերա՛զմ ու մա՛հ ։

### ՌԱԴԱՄԷՍ

Փառասիրութեան անմեղ սարսուռ մը բոլոր սիրտս կ'գրաւէ ։ Քաջալերութի՛ւն, վազենք 'ի յաղթանակ ։ Ի տար աշխարհ, պատերա՛զմ և մա՛հ ։

### ԱՄՆԷՐԻՍ, դրօշակ մը բերելով և Ռատամէսի յանձնելով.

Իմ ձեռքէս ընդունէ՛, ո՛վ քաջդ, այս պանծալի դրօշակը. Թո՛ղ քու առաջնորդն ըլլայ այս. Թո՛ղ քու ջահն ըլլայ փառաց ճանապարհին մէջ ։

### ԱՅՏԱ

(Որո՞ւ համար է իմ արտասուքն . ո՞ւր համար՝ իմ աղօթքն։



ինչ զօրութիւն կ'շղթայէ զիս անոր ։ Պէ՜տք եմ միթէ սիրել զանիկա · · · · անիկա՛, Թշնամի մը, օտարական մը ։)

### ԱՄԵՆՔՆ

Պատերա՛զմ, պատերա՛զմ, ջա՛րդ յարձակողին ։ Գնա՛, Ռատամէս, և յաղթական վերադարձի՛ր ։

(Ամենքն ալ կ'մեկնին, բաց յԱյտայէ ։)

### ԱՅՏԱ

Յաղթական վերադարձի՛ր · · ·, և իմ շրթունքէ՞ս կ'ելնէ այս պիղծ խօսքը ։ Յաղթակա՛ն, իմ հօ՞րս դէմ, հօ՛րս դէմ որ զէնք կ'առնու ինձ համար՝ որպէս զի հայրենիք մ'ինձ վերադարձնէ, պալատ մը, և այն նշանաւոր անունն որ ստիպուած եմ հոս ծածկել ։ Յաղթակա՞ն · · · ·, իմ եղբարց դէմ · · ·, և ես նորէն տեսնեմ զանիկա՝ իմ սիրելեացս արեա՛մբը շաղուած տեսնեմ՝ որ կ'ցնծայ, կ'բերկրի Եգիպտացի զաւարտական ծափահարութիւններովը, և, տեսնե՛մ · · · սայլի մը ետև · · · Թագաւո՛ր մը · · ·, հա՛յրս, շղթաներով բեռնաւորեալ ։ Ո՛վ աստուածնե՛ր, մի՛ լսէք այս պիղծ խօսքը ։ Վերադարձուցէ՛ք աղջիկն հօր մը ծոցը · · · · ։ Կործանեցէք մեր հարստահարչաց գունդերը · · · ։ Ո՛հ, Թշուառակա՛նս · · ·, ինչ կ'ըսեմ ։ Հապա իմ սէ՞րս · · · ։ Կրնա՞մ միթէ բաժնուիլ այն կրակոտ սէրէն, որն որ՝ գերութեանս մէջ իբր արեւ ճառագայթ մը, երջանիկ ըրած է զիս ։ Ռատամէս · · ·, անիկա մեռնի · · · ։ Անիկա՞ զոր ա՛յնչափ կ'սիրեմ ։ Ո՛հ, երբէ՛ք, երկրի վրայ երբէ՛ք չէ տեսնուեր ասկէ աւելի դաժան լլկանք կտոր կտորեղած սրտի մը մէջ · · · ։ Չե՛մ կարող արտասանել և ոչ կոչել հօր՝ և սիրահարի նուիրական անունները ։ Միոյն համար, նաև միւսին, կ'դողամ · · · կ'վրդովիմ, կ'ուզեմ արտասուել, ո՛հ, կ'ուզեմ աղօթել. բայց իմ աղօթքն անէծքի կը փոխուի ։ Արտասուքս մեղանչանք են, հառաչանքս՝ յանցանք · · · ։ Խելքս՝ խոր մութի մը մէջ կ'ցնորի, և այս անգութ անձկութեանս մէջ կ'ուզէի մեռնիլ ։ Ո՛վ աստուածներ, գթացէ՛ք իմ վիշտերուս ։ Ա՛լ չ'ունիմ յոյս մ'իմ ցաւերուս մէջ ։ Ո՛ սէր դողդոջուն · · ·, աղէտալի՛ց սէր, պատռէ՛ սիրտս · · ·, մեռցո՛ւր զիս ։

(Կ'մեկնի փոյթ 'ի փոյթ ։)

# ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

## ՎՈՒԼՔԱՆԻ ՄԵՀԵՆԻՆ ՆԵՐՍԻ ԿՈՂՄԸ, Ի ՄԵՄՓԻՍ

*Կամարաշէն լայն սրահ մը, քարեղէն սիւներով կառուցեալ՝ Վերին-Եգիպտոսի տաճարներու ընթի-ոճով։ Պատերը կրօնական պատկերներով ծածկուած։ Հեռուն՝ մէջտեղը, մեծ դուռ մը ուսկէ անդին կ'երեւնայ Նեղոս գետն և Լիպիոյ լեռներու-գօտին։ Բագին մը՝ որու վրայ զաւատուած մը։ Խունկի անօթներ, երբեմն ոսկեղէն ամաններու վրայ զետեղուած։*

ՔՐՄՈՒՆՔ եւ ՌԱՄՓԷՍ բագինին առջեւ յետոյ ՌԱՏԱՄԷՍ։ Ներսէն ՔՐՄՈՒՀԻՔ կ'երգեն տաւիղներու ձայնին ներդաշնակ։

### ԹԷՐՄՈՒԹԻՍ եւ ՔՐՄՈՒՀԻՔ, ներսէն։

Անե՛ղը Փթահ, կենսատու հօրի՛ աշխարհիս, աղաչե՛մք զքեզ։
Անե՛ղը Փթահ, կենսատու հօրի՛ աշխարհիս, աղաչե՛մք զքեզ։
Հօ՛ւր անստեղծ, յաւիտենակա՛ն, յորմէ երկին առաւ լոյս, աղաչե՛մք զքեզ։

### ՔՐՄՈՒՆՔ

Ո՛ Էակ, որ յոչնչէ արարեր զկոհակ, զերկիր և զերկին, աղաչե՛մք զքեզ։
Աստուա՛ծ, յորում 'ի հոգւոյ լինի հայրն և որդին, աղաչե՛մք զքեզ։



*(Ռատամէս կ'հանդիսանայ առանց զէնքի։ Մինչդեռ նա դէպ 'ի բագին կ'յառաջանայ. քրմուհիք նուիրական պարը կ'կատարեն։ Սպիտակ քեհեզ մը Ռատամէսի գլխին վրայ կ'դրուի։)*

### ՌԱՄՓԷՍ

Ո՛ աստուծոց սիրելի մահկանացու, քեզի յանձնուեցաւ Եգիպտոսի բաղդը։ Աստուծոյ դարբնած սա սուրբ Նիզակը քու ձեռքովդ պիտի տայ թշնամեաց, սոսկում, շանթ ու մահ, (դէպ 'ի զարդուած դառնալով) Աստուա՛ծ, դո՛ւ պահպանէ այս երկիրն ու լուծէ՛ անոր վրէժն։ Կարկառէ՛ աջդ Եգիպտոսի հողին վրայ։

### ՌԱՏԱՄԷՍ

Ո՛վ աստուած, իշխան բարձրագոյն և միջնորդ բոլոր մարդկային պատերազմի, պաշտպանէ՛ Եգիպտոսի նուիրական հողը։
*(Մինչդեռ Ռատամէս նուիրական զէնքերը կ'հագնի, քրմուհիք և քրմապետ նորէն կ'սկսին կրօնական երգեցողութեան և ծիսական պարը։)*

# ԱՐԱՐՈՒԱԾ Բ

## ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

## ԱՄՆԵՐԻՍԻ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԻ ՍՐԱՀԸ

Ամներիսի շքեղ հիւղին առաջն են ստրուկ կիներ որ կ'հագցնեն զինքը՝ յաղթութեան տօնին համար: Մանկլաւիկ ստրուկներ կ'պարեն՝ փետուրէ հովահարներ շարժելով:

### ԳԵՐԻ ԱՂՋԿՈՒՆՔ

Ո՛վ մի՛թէ երգերով և ծափահարութիւններով հասած է բնաւ այսպիսի փառքի մը, ահարեկ՝ նման աստուծոյ, փայլուն՝ նման արեգական: Եկո՛ւր.., գլխիդ վրայ դափնի պսակներ ծաղիկներով պիտի խառնուին: Փառաց օրհնութիւնք սիրոյ երգերու հետ պիտի հնչեն թունդ 'ի թունդ:

### ԱՄՆԵՐԻՍ

(Եկո՛ւր, սէ՛ր իմ, հեշտացո՛ւր զիս: Տո՛ւր երջանկութիւն իմ սրտի :)

### ԱՂՋԿՈՒՆՔ

Ո՞ւր են հիմակ բարբարոս օտարին բանակները: Ամպերու պէս ցիր ու ցան եղան քաջ ռազմիկին շունչէն: Եկո՛ւր...: ընդունէ՛ փառաց մրցանակը: Ո՛ ռազմահաս, յաղթութիւնը քեզ ժպտեցաւ, սէրը պիտի ժպտի քեզ:



### ԱՄՆԵՐԻՍ

(Եկո՛ւր. սէ՛ր իմ, զմայլեցո՛ւր զիս ձայնիդ անուշ հնչմամբը...:) Լռութիւն...: Այտա դէպ 'ի մեզ կ'յառաջանայ: Պարտուած մը աղջիկն է, իր վիշտը նուիրական է ինծի համար: (Ամներիս նշան մ'ըրածին պէս, ամէնքն ալ կ'մեկնին :) Զինքը տեսնելով՝ անողոք կասկածը նորէն կ'ծնի սրտիս մէջ: Վերջապէ՛ս այն աղէտալի գաղտնիքն հիմակ պիտի հասկցուի:

## ԱՄՆԵՐԻՍ եւ ԱՅՏԱ

### ԱՄՆԵՐԻՍ, — Այտա կուգայ բարեւելով մը:

Պատերազմին վիճակը ձախող է քեզի համար, ողորմելի Այտա՛: Մասնակից եմ սիրտդ ճմլող սուգին: Ես բարեկամուհիդ եմ, դու ինձնէ պիտի ընդունիս ամեն բան ու երջանիկ պիտ' ապրիս:

### ԱՅՏԱ

Մի՞թէ կրնա՛մ տակաւին երջանիկ ըլլալ, հեռու իմ բնիկ երկրէ: Այստեղ հօրս և եղբարցս վիճակը պէտք է որ մոռնամ:

### ԱՄՆԵՐԻՍ

Ցաւերուդ գութ ունիմ վրադ: Բայց և այնպէս սահման մը կայ աշխարհիս բոլոր ցաւերուն: Ժամանակը կ'բուժէ քու սրտի տառապանքը, և, աւելի քան ըժամանակն, զօրաւոր աստուած մը, սէ՛րը:

### ԱՅՏԱ, առանձին վրդովեալ.

(Սէ՛ր, սէ՛ր..., բերկրութի՛ւն... տագնա՛պ... զմայլիչ արբեցութի՛ւն... անգութ լլկանք... քու ցաւերու մէջ կեանք կ'առնեմ... այլ ժպիտ մը քեզնէ՝ երկինք կ'բանայ ինձ համար:)

### ԱՄՆԵՐԻՍ, Այտային նայելով.

(Բա՛րէ, ան ինչ դեղնութիւն է. քանի՜ն ծածուկ վրդ-

դէմքէր կ՚արտայայտէն։ Ո՛ սիրոյ տենդ․․․։ Կ՚դողամ գրեթէ իրեն հարցնելու։ Ե՛ս ալ իր տոսկումի տագնապն ունիմ։) Առ Այտայ [illegible] նայելով։) Լաւ ուրեմն, սիրուն Այտա, ինչու նորէն դող կ՚բռնէ քեզ։ Յայտնէ՛ ինձ գաղտնիքդ, վստահէ՛ իմ բարեկամութեան․․․։ Քու հայրենեաց դէմ կռուող քաջերուն մէջ․․․ մէկը․․․ անուշիկ հնհնուք մը գուցէ․․․ կ՚տայ սրտիդ․․․։

ԱՅՏԱ

Ի՞նչ կ՚ըսես։

ԱՄՆԷՐԻՍ

Բաղդն ամենու համար անգութ չ՚ներկայնիր, եթէ մեր զօրաց գնդին աներկիւղ սպարապետն ընկճած ըլլար, ՚ի մահ զարնուած․․․։

ԱՅՏԱ

Ի՞նչ կ՚ըսես, ա՛յ, թշուառական։

ԱՄՆԷՐԻՍ

Այո՛, Ռատամէս սպաննուեցաւ։ Զե՞ս լար։

ԱՅՏԱ

Պիտի լա՛մ, և միշտ։

ԱՄՆԷՐԻՍ

Աստուածները վրէժ լուծեցին քեզնէ։

ԱՅՏԱ

Աստուածները ինձ հակառակ եղած են միշտ։

ԱՄՆԷՐԻՍ, բարկութեամբ բորբոքեալ։

Ո՛հ, գօղա՛, սրտիդ մէջ կ՚կարդամ․․․ կ՚սիրես զանիկա։

ԱՅՏԱ

Ե՛ս։

ԱՄՆԷՐԻՍ

Մի՛ սուտ խօսիր։ Բառ մը և՛ս, եւ գիտնամ ճշմարտու-



տութիւնը։ Երեսս նայէ՛, շիտակ։ Խաբեցի քեզ։ Ռատամէս կ՚ապրի։

ԱՅՏԱ, եռանդով, ծնկի կ՚գայ.

Կ՚ապրի․․․։ Փա՛ռք ձեզ, ո՛վ աստուածներ։

ԱՄՆԷՐԻՍ

Կ՚յուսա՞ս դեռ ևս ստախօսել։ (Սաստկութեամբ։) Այո՛, կը սիրե՛ս զանիկա. բայց ե՛ս ալ կ՚սիրեմ զան․․․։ Կ՚հասկնա՞ս. սիրոյդ թշնամուհին ե՛ս եմ. ե՛ս, Փարաւոններու աղջիկ մը։

ԱՅՏԱ, հպարտութեամբ ոտքի կ՚ելնէ.

Թշնամուհի՛ս։ Է՛հ, լաւ, այդպէս թո՛ղ ըլլայ․․․ բայց ես ալ․․․ եմ․․․։ (Հանդարտիլ ջանալով։) Ի՞նչ կ՚ըսէի․․․։ Շնո՛րհ․․․։ Գութ ունեցիր վիշտերուս վրայ․․․։ Իրօք, կ՚սիրեմ զինքը, անբաւ սիրով մը։ Դո՛ւ երջանիկ ես, դու՝ զօրաւոր․․․։ Ես մինակ այս սիրոյն համար կ՚ապրիմ։

ԱՄՆԷՐԻՍ

Դողա՛, ո՛ անարգ գերի։ Սիրտդ պիտի ջախջախեմ։ Մա՛հդ ստորագրեցիր այդ սիրով։ Ես՝ քու ճակատագրի իշխանուհին եմ։ Ատելութեան և վրէժու կատաղութիւնք սիրտս կ՚լեցունեն։ (Ներսէն շեփորներու նուագ) Այս տօնախմբութեան մէջ, որն որ կ՚պատրաստուի, ինծի հետ միատեղ պիտի գտնուիս, ո՛վ ստրուկ աղջիկ։ Դո՛ւ հողի և փոշւոյ մէջ պիտ՚ անարգուիս, իսկ ես գահոյից վրայ, թագաւորին քովը պիտ՚ըլլամ։ Եկո՛ւր, հետեւէ՛ ինձ, տեսնես թէ՝ կրնա՞ս հետս մրցիլ։

ԱՅՏԱ

Թա՛րէ. գթութիւն․․․։ Ա՛լ ինչ կ՚մնայ ինձ․․․։ Կեանքս աւեր մ՚է։ Դու ապրէ՛ և իշխէ՛․․․։ Բարկութիւնդ շատ չ՚տևեր. այդ սէրը որ կ՚գրգռէ զքեզ, գերեզմա՛նը կ՚տանիմ հետս։

# ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

## ԹԷԲԷ ՔԱՂԱՔԻՆ ՄԻ ՄՈՒՏՔԸ

Առջևի կողմը խումբ մը արմաւենի։ Աջ կողմը Ամոն-Աստուծոյն տաճարը և նախասրահին գահոյք վրան ծիրանեգոյն ամպհովանիով մը։ Մէջտեղը՝ երկու կողմը սիւնաշարներով ճամբայ մը, որուն ծայրը կ'երևնայ դարպասին մէկ կողմի մասը։ Տեսարանը ժողովրդով լեցուն։

ԹԱԳԱՒՈՐԸ կ'ներկայի, ետեւէն պաշտօնեայք, քրմունք, հազարապետք, հովանաւոր բռնողներ, դրօշակիրք եւն։ Յետոյ ԱՄՆԷՐԻՍ ԱՅՏԱՅԻ հետ, եւ աղախինք։ Թագաւորը գահը կ'ելնէ։ Ամներիս թագաւորին ձախ կողմը կ'նստի։

### ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Պարծանք Եգիպտոսի և Իզիսի որ կ'պաշտպանէ իր նուիրական հողը։ Ցնծութեան երգեր թո՛ղ հռչակին Տելթա կառավարող թագաւորին անունը։ Եկո՛ւր, ո՛վ մարտադիր յաղթական, եկո՛ւր, մասնակցէ՛ մեր հրճուանաց։ Դափնի պսակներ և ծաղիկներ սփռե՛նք այն դիւցազնի քայլերուն վրայ։

### ԿԱՆԱՅՔ

Մրտենիներ և դափնիներ թող հիւսուին յաղթողաց գլխին վրայ, ծաղիկներու յորդահոսանք անձրև մը, ամպհովանոյ մը պէս թո՛ղ տարածի՛ անոնց բանակներուն վրայ։ Պարենք ո՛վ եգիպտացի երիտասարդուհիք, մեր ծածուկ կաքաւը, ինչպէս արևու բոլորը կ'շողշողին երկնի աստղերը։



### ՔՐՄՈՒՆՔ

Վերցուցէ՛ք ձեր նայուածքը դէպ 'ի յաղթութեան բարձրագոյն վճռատրոց վրայ։ Փա՛ռք տուէք աստուծոյ այս բարեբաստ օրուան համար։ Պանծալի ապագայ մը կ'հաստատէ առ մեզ, և ա՛լ վախ չ'ունինք այն բազդէն որ բարբարոսները կ'հարուածէ։

(Եգիպտական զօրաց գունդեր յառաջընթաց շեփորայի նուագածուներով կարգաւ կ'անցնին թագաւորին առջևէն։ Յետոյ կ'գան զօրս խումբ կատարեալ որք կ'ներկայացնեն Սախմ, Լիպիա և Եգիպտոսը։ Անոնցմէ ետև կ'յառաջանան նախնեաց արձանները, կռոպաշտներու արձանները և Աստծօրի նուիրական մոխիրը զոր կրմանք կ'տանին։ Ի վերջոյ կ'հանդիսանայ Ռատամէս, նստած՝ դահաւորակի մը վրայ, զոր ոսկի պաշտօնեայք ուսերնուն վրայ կ'կրեն։)

**ԹԱԳԱՒՈՐՆ**, (կ'իջնէ գահէն, որպէս զի գրկէ զՌատամէս)

Ազատի՛չ հայրենեաց, բարե՛ւ քեզ։ Մօտեցի՛ր, Աղջիկս իր ձեռքով կ'տայ քեզ յաղթութեան պսակը։

(Ռատամէս կ'խոնարհի Ամներիսի առջև, որ կ'դնէ պսակն անոր գլուխը։)

**ԹԱԳԱՒՈՐՆ**, առ Ռատամէս

Արդ ուրեմն, ըսէ՛ ինձ, ինչ է քու ամենէ մեծ փափաքդ։ Այսօր բան մը չ'պիտի խնայի քեզ։ Կ'երդնում թագիս վրայ, կ'երդնում սուրբ աստուծոյ վրայ։

### ՌԱՏԱՄԷՍ

Նախ՝ շնորհ ըրէ որ քու առջև բերուին բոլոր գերիները։
(Պահապան զօրքերու մէջ տեղը կ'յառաջանան Եթովպիոյ կալանաւորք, որոցմէ ետև կ'գայ Ամօնասրօ, պաշտօնեայի մը հագուստով։)

### ԱՅՏԱ

Ինչ կ'տեսնեմ... նոյն ինքը... Հայրս...

### ԱՄԵՆՔՆ

Իր հա՛յրը։

**ԱՄՆԷՐԻՍ**

Մեր իշխանութեան ներքեւ ։

**ԱՅՏԱ** , իր հայրը ճանչելով․

Դո՛ւն , կալանաւո՛ր ։

**ԱՄՕՆԱՍՐՕ** առ Այտա , ցած ձայնով․

Մի՛ մատներ զիս ։

**ԹԱԳԱՒՈՐՆ**

Մօտեցի՛ր ․․․ ։ Ուրեմն դո՛ւ ես ․․․ ։

**ԱՄՕՆԱՍՐՕ**

Իր հայրը ․․․ ։ Պատերազմեցայ ․․․ մենք յաղթուեցանք ․․․ և 'ի զուր փնտռեցի մահս ։ (Իր հագուստը ցուցնելով․) Այս հագուստն որ կ'կրեմ կրնայ ձեզ իմացնել թէ Թագաւորս և հայրենիքս պաշտպանեցի ես ։ Բաղդը հակառակեցաւ մեր զօրաց դնդին ։ Ամենէ քաջասիրտ ռազմիկներու փոյթն իսկ 'ի դերեւ ելաւ ։ Իմ Թագաւորն , հողերուն մէջ , ոտից մօտ , ընկաւ մեռաւ՝ վէրքերով ծածկուած ։ Եթէ հայրենեաց սէրը մեղանչանք մ'է , ամենքս ալ յանցաւոր ենք , ամենքս ալ մեռնելու պատրաստ ։ (Պաղատելով ձայնով մը Թագաւորին դիմելով։) Իսկ դո՛ւ , ո՛վ Թագաւոր , զօրե՛ղդ իշխան , գթա՛ծ եղիր ասոնց ։ Այսօր , մենք զարնուեցանք բաղդէն . վաղը , բաղդն կրնայ զարնել և զձեզ ։

**ԱՅՏԱ , ԿԱԼԱՆԱՒՈՐՔ եւ ՍՏՐՈՒԿՔ .**

Այո՛, զարնուեցա՛նք աստուածներէն, արգահատութի՛ւնդ կը հայցենք , գթութի՛ւնդ ։ Երանի՛ թէ երբէք չ'քաշէիր մեր այսօրուան նեղութիւնը ։

**ՌԱՄՖԻՍ եւ ՔՐՄՈՒՆՔ**

Ոչնչացո՛ւր , ո՛վ արքայ , սա կատաղի սերունդը ։ Գոցէ՛ սիրտդ նենգաւոր ձայներու առջև ։ Մատնէ՛ զանոնք 'ի մահ , որպէս զի կատարի աստուծոց կամքը ։



**ԺՈՂՈՎՈՒՐԴ**

Ո՛ քրմունք , ողոքեցէ՛ք ձեր բարկութիւնը ։ Լսէ՛ք յաղթըւածներուն խոնարհ աղաչանքն ։ Եւ դո՛ւ , ո՛վ արքայ , զօրե՛ղդ քաջազո՛ւնդ , բա՛ց սիրտդ գթութեան առջև ։

**ՌԱԴԱՄԷՍ** , Այտայի նայելով․

(Այն կսկիծն , որ կ'կարդացուի իր դէմքին վրայ , աւելի եւս գեղանի կ'ընէ զինքն իմ աչերու ։ Իր փարելի արտասուաց մէն մի կաթիլը սէրս կ'մանկացնէ սրտիս մէջ ։)

**ԱՄՆԷՐԻՍ**

(Ի՛նչ նայուածք էր զոր նետեց Այտայի վրայ ։ Ի՛նչ եռանդուն հուր մ'է այն որ կ'շողէ իրենց դէմքը ։ Ա՞յսպիսի վիճակի մը կ'սպասէի միթէ ։ Ա՛, վրիժառութիւնը կ'մռնչէ սրտիս մէջ ։)

**ԹԱԳԱՒՈՐՆ**

Բաղդը յաջողեց մեզ ։ Գթութիւն ցուցնենք ։ Արգահատութիւնը հաճելի է աստուծոց և հաստատ կ'պահէ իշխանաց զօրութիւնը ։

**ՌԱԴԱՄԷՍ** , առ Թագաւորն

Ո՛վ Թագաւոր , յանուն սուրբ աստուծոց , 'ի պարծանս արքայական Թագիդ , կատարէ՛ ուխտս , երդումն ըրիր ։

**ԹԱԳԱՒՈՐՆ**

Այո՛, երդումն ըրի ։

**ՌԱԴԱՄԷՍ**

Լա՛ւ ուրեմն , Եթովպացի կալանաւորաց կեանքն ու ազատութիւնը կ'խնդրեմ քեզմէ ։

**ԱՄՆԷՐԻՍ**

Ամենո՞ւն ալ ։

**ՔՐՄՈՒՆՔ**

Ի մա՛հ հայրենեաց թշնամիները ։

ԺՈՂՈՎՈՒՐԴՆ

Թողութիւն ողորմելեաց ։

ՌԱՄՓԻՍ

Լսէ՛, ո՛վ արքայ ։ (Առ Ռատամէս) Եւ դո՛ւ, ո՛վ դիւցազնդ նորատի, իմաստուն խորհուրդ մը ։ Ասոնք մեր թշնամիներն են՝ ու քաջ։ Վրէժխնդրութիւնը անոնց սրտի մէջն է ։ Թողութեամբ՝ համարձակութիւն առածնուն պէս, նորէն զէնքի պիտի դիմեն ։

ՌԱՏԱՄԷՍ

Ամօնասրօ՝ ռազմիկ թագաւորն, մեռած է ։ Յաղթահարելոց ա՛լ յոյս մը չմնար ։

ՌԱՄՓԻՍ

Գոնէ, իբր հաշտութեան և ապահովութեան պատանդ՝ Այտայի հայրը մեր քով մնայ ։ Միւսները թո՛ղ ազատ ըլլան ։

ԹԱԳԱՒՈՐՆ

Կ'հաւանիմ խորհուրդիդ ։ Հիմակ խաղաղութեան և ապահովութեան համար կ'ուզեմ աւելի հաստատ պատանդ մը տալ քեզի ։ Ռատամէ՛ս, հայրենիքը քե՛զի պարտաւոր է ամեն ինչ ։ Ամնէրիսի ձեռքը վարձատրութիւնդ պիտ՛ ըլլայ ։ Օր մը Եգիպտոսի վրայ անոր հետ կ'թագաւորես ։

ԱՄՆԵՐԻՍ

(Այն ստրուկ աղջիկը թո՛ղ գայ հիմակ, թող գա՛յ յափշտակէ սէրս իմ ձեռքէ, եթէ կ'համարձակի ։)

ԹԱԳԱՒՈՐՆ

Պարծա՛նք Եգիպտոսի և Իզիսի որ պաշտպանեց իր նուիրական երկիրը ։ Մրտենիներ և դափնիներ թող հիւսուին յաղթող քաջին գլխին վրայ ։

ՔՐՄՈՒՆՔ

Օրհնութի՛ւն երգենք Իզիսի որ կ'պաշտպանէ սուրբ երկիրը ։



Աղօթենք որ երջանիկ բաղդեր շնորհէն միշտ մեր հայրենեաց ։

ԱՅՏԱ

(Ա՜լ ի՛նչ յոյս կրնայ մնալ ինձ ։ Անոր, փառքն ու գահը. ինձի՝ մոռացումն... յուսահատութ սիրոյ մը դառն արտասուքն ։)

ԿԱԼԱՆԱՒՈՐՔ

Պարծա՛նք գթած Եգիպտոսի որ արձակեց մեր շղթաներն ու բաց թողուց մեզի հայրենեաց ճանապարհը ։

ՌԱՏԱՄԷՍ

(Գլխիս կ'իջնեն հակառակ աստուծոյ շանթերը ։ Բա՛յց ո՛չ, Եգիպտոսի գահն Այտայի սիրտը չարժեր ։)

ԱՄՆԵՐԻՍ

(Անպատում երանութիւն մը կ'զմայլէ զիս ։ Այսօր իմ սրտիս բոլոր երազները կ'կատարին ։)

ԱՄՕՆԱՍՐՕ, առ Այտա

Աղէ՛ քաջալերութի՛ւն... սպասէ հայրենեացդ երջանիկ ապագան..., մեզի համար արդէն մօտ է վրէժխնդրութեան արշալոյսը ։

ԺՈՂՈՎՈՒՐԴՆ

Պարծա՛նք Եգիպտոսի և Իզիսի, որ կ'պաշտպանէ իր նուիրական երկիրը ։ Թող հիւսուի՛ն մրտենիներն ու դափնիները յաղթող քաջին գլխին վրայ ։

# ԱՐԱՐՈՒԱԾ Դ

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

## ՆԵՂՈՍԻ ԱՓՈՒՆՔԸ

Գրանիտեայ ապառաժներ, որոնց մէջէն արմաւենիներ կ՚բարձրանան: Ժայռերու կատարին՝ Իզիսի մեհեանը կէսով ծածկուած տերևներէ: Գիշեր է: Լուսնի նշոյլ:

ԹԷՐՄՈՒԳՀԻՍ եւ ՔՐՄՈՒՀԻՔ մեհեանին մէջ:

Ո՛վ Օզիրիսի անմահ մայրն և ընկերուհին, ո՛վ աստուածուհիդ, որ մարդկան սրտի մէջ անմեղ բաբախումներու զարթումն կ՚տաս, հաշտարար եղիր մեզ, ողորմած մայր յաւիտենական սիրոյ:

(Ամնէրիս և Ռամփիս՝ երևնին պահապաններով, տեսարանին հեռուէն կ՚յառաջանան:

**ՌԱՄՓԻՍ**, առ Ամնէրիս.

Եկո՛ւր Իզիսի մեհեանը: Աստուածուհւոյն շնորհքը խնդրէ հարսանեացդ նախատօն օրս: Իզիս մարդկանց սրտին մէջ կ՚կարդայ: Մարդկան բոլոր գաղտնիքը ծանօթ են անոր:



**ԱՄՆԷՐԻՍ**

Ա՛յո՛, աղաչեմ զինքն որպէս զի Ռատամէս ինծի տայ իր բոլոր սիրտն ինչպէս անոր իմ սիրտն տրուած է առ յաւէժ:

**ՌԱՄՓԻՍ**

Օ՛ն անդր մտնենք: Աղօթենք մինչև ցայգ: Ես հետդ պիտի ըլլամ: (Ամենքն ալ մեհեանը կ՚մտնեն: Երգողաց դասը կ՚շարունակէ օրհնութիւնները:)

**ԱՅՏԱ**, քօղով մը ծածկուած՝ զգուշութեամբ կ՚յառաջանայ:

Ո՛վ կապուտակ երկնից աստեղատունք, ծածկուեցէք քօղով մը...: Պատէ՛ զիս, ո՛ գիշեր, քու խորը վերարկուով. ...: Գաղտնի պահէ իմ կսկիծն ամենու աչքէ...՝ պահէ արտասուքս: Հոս պիտի գայ Ռատամէս...: Ի՞նչ պիտ՚ ըսէ ինծի...: Կ՚դողամ...: Բա՛յց, եթէ կ՚գաս, ո՛ անգութ, վերջին հրաժեշտդ առ լու բերելու՝ Նեղոսի խորունկ յորձանքներն ինծ պիտ՚ ըլլան գերեզման... խաղաղութիւն դուցէ... և մոռացում...: Ո՛ կապուտակեալ երկինք... ո՛ իմ բնիկ երկրի անուշ զեփիւռներ, ուր՝ ես բարեբաստ ու երջանիկ, կ՚շնչէի ծաղիկ հասակիս մէջ...: Ո՛, կանաչազեղ բլուրներ... ո՛ զետափունք հոտաւէտ... և դո՛ւ, ո՛վ հայրենիք իմ, ա՛լ երբէ՛ք չ՚պիտի տեսնեմ զքեզ...: Ո՛վ զովաշունչ հովիտներ, ո՛վ ապաստան հեզիկ ու բարեբաստիկ՝ ուր սիրային երդումներ օր մը ընդունէր եմ...: Բայց հիմակ ա՛լ փարատեցաւ սիրոյ երազը. ո՛վ հայրենիք իմ, հայրենիք երբէ՛ք, ա՛լ երբէ՛ք չպիտի տեսնեմ զքեզ:

## ԱՄՕՆԱՍՐՕ ԵՒ ԱՅՏԱ

**ԱՅՏԱ**

Ո՛ երկին, հայրս:

Կարեւոր պատճառ մը դէպ 'ի քեզ կ'բերէ զիս, Այտա՛։ Բա՛ն մը աչքէս չ'փախչիր···։ Սիրով կ'այրիս կ'մրկիս Ռատամէսի համար···։ Նա կ'սիրէ զքեզ··· և դու հո՛ս կ'սպասես անոր։ Սիրոյդ թշնամուհի Փարաւոններու ծնունդ այն աղջիկն է···։ Անիծեա՛լ սերունդ, մեզի աղէտաբեր և զզուելի սերունդ։

ԱՅՏԱ

Եւ անոր կարողութեա՞նը ներքեւ ըլլամ··· ե՛ս, Ամոնասրոյի աղջիկն։

ԱՄՕՆԱՍՐՕ

Անոր կարողութեա՞նը ներքեւ···ո՛չ···։ Եթէ կամիս՝ կ'յաղթես սիրոյդ զօրաւոր թշնամուհիին։ Հայրենիք, թագաւորութիւն, սէր, ամէն բան պիտ՝ ունենաս։ Նորէն պիտի տեսնես այն հոտաբոյր անտառները, զովաշունչ հովիտներն ու մեր ոսկեզօծ մեհեանները։

ԱՅՏԱ

Պիտի տեսնե՛մ մեր հոտաբոյր անտառները, մեր հովիտները, մեր ոսկեզօծ մեհեանները։

ԱՄՕՆԱՍՐՕ

Ո՛ բարեբաստ ընկերուհիդ այնմ զոր սիրեսդ, մեծաշուք երջանկութիւն մ'ալ պիտի կարենաս վայելել հոն։

ԱՅՏԱ

Վայելել··· ո՛հ, մէ՛կ օր միայն այդպիսի քաղցրիկ հեշտութիւն մը, մէ՛կ ժամ միայն այդ հրճուանքն ու ետքը···։ մեռնի՛լ։

ԱՄՕՆԱՍՐՕ

Բայց յիշէ՛ թէ Եգիպտոս անողոք երեւցաւ մեզի դէմ, թէ պղծեց մեր տուները, մեհեաններն ու բագինները, թէ՝ շղթաներով բռնաւորեց առեւանգեալ կոյսերն և 'ի մահ ջարդեց կիները՝ ծերերն ու տղաքները։



ԱՅՏԱ

Բա՛բէ կ'յիշեմ այն օրերն աղետալի։ Կ'յիշեմ իմ սրտի կրած սև սուգը։ Եղո՛ւկ···։ Ո՛վ աստուածներ, հասուցէ՛ք մեզի այն ցանկալի արշալոյսն երջանիկ օրերու····։

ԱՄՕՆԱՍՐՕ

Չպիտի ուշանանան այն օրերը —։ Մեր ժողովուրդն ոտք կ'ելնէ զինուոր։ Արդէն ամէն ինչ պատրաստ է։ Յաղթութիւնը մերն ըլլայ պիտի։ Մինակ սա կ'մնայ ինձ գիտնալ թէ ո՞ր ճանապարհն պիտ՝ ընկնայ մեր թշնամին։

ԱՅՏԱ

Ո՛վ կրնայ երբէք գտնել այդ գաղտնիքը։

ԱՄՕՆԱՍՐՕ

Նոյն ինքն դո՛ւ։

ԱՅՏԱ

Ե՞ս։

ԱՄՕՆԱՍՐՕ

Ռատամէս հոս պիտի գայ պահէ մը։ Նա կ'սիրէ զքեզ···։ Ինքն է Եգիպտական զօրքը կառավարողը···։ Կ'լսե՞ս։

ԱՅՏԱ

Կ'սոսկա՛մ···։ Ի՜նչ խորհուրդ կ'տաս ինձ···։ Ո՛չ, ո՛չ, երբէ՛ք։

ԱՄՕՆԱՍՐՕ, վայրենի յուզմով մը·

Օ՛ն արի՛ ուրեմն, քաջալերութի՛ւն, ելէ՛ք, ո՛վ Եգիպտական զունդեր։ Ի հո՛ւր, աւերեցէ՛ք քանդեցէ՛ք մեր քաղաքները։ Տարածեցէ՛ք չորս կողմն զարհուրանք՝ արիւն՝ մահ···։ Ա՛լ սանձ չ'կայ ձեր կատաղութեան։

ԱՅՏԱ

Բա՛բէ···, հա՛յր։

ԱՄՕՆԱՍՐՕ

Իմ աղջի՛կս կ'կոչես դու։

**ԱՅՏԱ**, ահաբեկ, պաղատանօք

Գթութի՛ւն ։

**ԱՄՕՆԱՍՐՕ**

Արեան հոսանքներ կ'վազեն ընկճելոյ քաղքին վրայ · · · ։ Կը տեսնե՞ս. մեռելոց կոյտերուն վրայ սև սև մրրիկներ կ'բարձրանան · · · ։ Կ'գոչեն — Ի քէ՛ն մեռանի հայրենիք ։

**ԱՅՏԱ**

Գթութի՛ւն ։

**ԱՄՕՆԱՍՐՕ**

Ահուելի ոգի մը կ'երևի մեզ մութին մէջ · · · ։ Դողա · · · ։ Իր ոսկրուտ բազուկները գլխոյդ պիտի իջնեն · · · ։ Ան է քու մայրդ · · · · Ճանչցի՛ր անոր դէմքը ։ Մայրդ կ'անիծէ զքեզ ։

**ԱՅՏԱ**, զահի հարեալ

Բա՛ւէ · · · ո՛չ, հա՛յր ։

**ԱՄՕՆԱՍՐՕ**, զանիկա հրելով

Կորի՛ր, անարժան · · · դու աղջիկս չ'ես ։ Դու՝ Փարաւոններու գերին ես ։

**ԱՅՏԱ**

Հա՛յր գերի չ'եմ անոնց · · · ։ Մի՛ անիծեր զիս, մի՛ անիծեր ։ Կրնաս տակաւին աղջիկդ կոչել զիս · · · ։ Արժանաւոր պիտ՝ ըլլամ իմ հայրենեաց ։

**ԱՄՕՆԱՍՐՕ**

Մտաբերէ՛ թէ նկուն և թշուառ ժողովուրդ մը քեզմէ միայն կրնայ կանգնիլ ։

**ԱՅՏԱ**

Ո՛ հայրենիք, հայրենի՛ք, ինչ բաներու պատճառ կըլլաս ինձ ։

**ԱՄՕՆԱՍՐՕ**

Քաջալերութի՛ւն · · · ։ Ահա կ'գայ · · · ։ Սատեղ, ամէն բան մտիկ պիտ՛ընեմ, (Արմաւենիներու մէջ կ'պահուըտի ։)



## ՌԱՏԱՄԷՍ եւ ԱՅՏԱ

**ՌԱՏԱՄԷՍ**

Վերջապէ՛ս, նորէն կ'տեսնեմ զքեզ, իմ անո՛ւշ Այտա · · · ։

**ԱՅՏԱ**

Կեցի՛ր, անխոհեմ · · ·, ինչ կ'յուսաս տակաւին · · · ։

**ՌԱՏԱՄԷՍ**

Սէրն առ քեզ կ'բերէ զիս ։

**ԱՅՏԱ**

Քեզի կ'սպասեն տօնախմբութիւնք, ուրիշ սէր մը հռչակելու համար, ո՛վ ամուսինդ Ամնէրիսի · · · ։

**ՌԱՏԱՄԷՍ**

Ինչ կ'ըսես ։ Դո՛ւ մի միայն, Ա՛յտա, դո՛ւ ես միայն իմ սէր ։ Աստուածնե՛րը վկայ · · · ։ Դո՛ւ պիտի ըլլաս իմս ։

**ԱՅՏԱ**

Մի՛, սուտ երդմամբ մի՛ պղծեր անձդ ։ Կ'սիրէի զքեզ քաջ. ալ չպիտի սիրեմ զքեզ երդմնազանց ։

**ՌԱՏԱՄԷՍ**

Սիրոյս վրայ կ'կասկածի՞ս միթէ, Այտա ։

**ԱՅՏԱ**

Եւ ինչպէս կ'յուսաս ազատիլ Ամնէրիսի ցանկութենէն, թագաւորին կամքէն, ժողովրդին փափաքէն, մոգերուն բարկութենէն,

**ՌԱՏԱՄԷՍ**

Լսէ՛ ինձ, Այտա ։ Հպարտ Եթովպիան նորէն կ'սթափի այն տկարութենէ՝ ուր ընկած էր վերջին պատերազմով ։ Քու ազգայինք արդէն կ'ընթանան մեր երկրի վրայ ։ Եգիպտացւոց

պարապեսն , ե՛ս պիտ՚ըլլամ ։ Յաղթութեան առաջին ձայնը , յաղթութեան առաջին ծափահարութիւնն ա՚ւածիս պէս , Թագաւորին ոտքը պիտ՚ ընկնամ բանամ անոր սիրտս և , իմ փառաց պսակն՝ դո՛ւ պիտ՚ըլլաս Ա՛յտա ։ Յաւխտենական սիրով մը երջանիկ պիտ՚ապրինք ։

ԱՅՏԱ

Զե՛ս փախնար Ամնէրիսի անագորոյն բարկութենէ ։ Իր մրէժն շանթի պէս պարհուրելի , իմ վրայ պիտ՚ ընկնայ , հօրս վրայ , իմ բոլո՛ր սիրելեաց վրայ ։

ՌԱՏԱՄԻՍ

Կ՚պաշտպանեմ զքեզ ։

ԱՅՏԱ

Ո՛չ , չպիտի կրնաս ։ Բայց և այնպէս եթէ կ՚սիրես զիս՝ մէկ ճամբայ կայ մեզի համար ․ ․ ․ ։

ՌԱՏԱՄԻՍ

Ո՞րն է ։

ԱՅՏԱ

Փախչի՛լ ։

ՌԱՏԱՄԻՍ

Փախչի՞լ ։

ԱՅՏԱ , ջերմեռանդ

Փախչի՛նք այս արևակէզ կլիմայէն և այս չոր անբեր երկրէն ։ Նոր հայրենիք մը կ՚բացուի մեր սիրոյ առջև ․ ․ ․ ։ Հոն ծաղիկներով հոտաւէտ՝ նորածիլ անտառներու ծոցն անպատում հեշտութեան մը մէջ մոռնա՛նք աշխարհս ։

ՌԱՏԱՄԻՍ

Մինթէ օտար աշխարհ մը պէտք եմ փախչիլ քեզի հետ , թողուլ հայրենիքս , թողուլ մեր սատուծոյ բագիններն ․ ․ ․ ։ Ի՞նչպէս կարենամ մոռնալ իմ բնիկ երկիրն ուր փառաց պատւոյ առաջին պսակն ընդունեցայ ․ ի՞նչպէս մոռնամ ո՛հ այն երկինն ուր մեր սէրն օր տեսաւ ։



ԱՅՏԱ

Իմ հայրենեաց պղատագոյն երկնի ներքև մեզ սիրոյ քաղցրութիւնը կ՚վայելենք ։ Այն տեղ , մէկ տաճարի մէջ՝ մի և նոյն աստուածները կ՚պաշտենք ։

ՌԱՏԱՄԻՍ , վարանելով

Ա՛յտա ։

ԱՅՏԱ

Չ՚ես սիրեր զիս ։

ՌԱՏԱՄԻՍ

Չ՚եմ սիրեր զքեզ ։ Երբէ՛ք մահկանացու մը և ոչ աստուած մը չպիտի այրի այսպիսի սիրով մը ։

ԱՅՏԱ

Գնա՛ , գնա՛ , քեզ կ՚սպասէ Ամնէրիս բագիններուն մօտ ։

ՌԱՏԱՄԻՍ

Ո՛չ , բնաւ երբեք ։

ԱՅՏԱ

Բնաւ երբէ՞ք , կ՚ըսես ։ Թո՛ղ իյնայ ուրեմն տապարն ի՛մ գլխիս , հօ՛րս գլխին ։

ՌԱՏԱՄԻՍ

Ա՛յ , ո՛չ , ո՛չ , փախչի՛նք ։ (Սիրայեղց որոշումով մը) Այո՛ , փախչի՛նք այս պատերէն , փախչի՛նք ՚ի միասին անապատը ։ Հո՛ս , մինակ ապերջանկութիւնը կ՚տիրէ , հո՛ն , սիրալիր երկին մը կ՚վառի ։ Անեզր անապատներն ըլլան մեր ամուսնական անկողինը ։ Մեր վերեն թող փայփլի՛ն աստղերն իրենց շքեղ նշոյլով ։

ԱՅՏԱ

Երկին մեզ կ՚սպասէ իմ նախնեաց բարեբաստ երկրին վրայ , հոն՝ հողն ո՛չ այլ ինչ է , բայց քաղցրահոտութիւն ու ծաղիկ ։ Զովաշունչ հովիտք և դալար մարգագետինք ըլլան մեր ամուսնական անկողինը ։ Մեր վերեն թող փայփլի՛ն աստղերն իրենց շքեղ նշոյլով ։

ԱՅՏԱ եւ ՌԱՏԱՄԷՍ

Եկո՛ւր հետս, եկո՛ւր փախչի՛նք ՚ի միասին այս վշտալից երկրէս ։ Եկո՛ւր հետս ։ Կ՚սիրեմ զքեզ․․․ կ՚սիրեմ․․․․ սէրն առաջնորդ կ՚ըլլայ մեզ ։ (Կ՚հեռանան շուտ ։)

ԱՅՏԱ, յանկարծ կանգ առնելով.

Բայց, ըսէ՛ ինձ ․ ի՞նչ ճամբով պիտի խուսափինք զօրաց բանակէն։

ՌԱՏԱՄԷՍ

Թշնամւոյն վրայ յարձակելու համար մերիններէն ընտրուած ճամբան ազատ պիտ՚ ըլլայ մինչև վաղը ։

ԱՅՏԱ

Ո՞րն է այդ ճամբան ։

ՌԱՏԱՄԷՍ

Նափաթայ կիրճերը․․․․ ։

ԱՄՕՆԱՍՐՕ ԵՒ ՆՈՅՆՔ

ԱՄՕՆԱՍՐՕ

Նափաթայ կիրճե՞րը ։ Հո՛ն պիտ՚ ըլլան իմ զօրքերն ։

ՌԱՏԱՄԷՍ

Ա՛, ո՞վ լսեց մեզ․․․ ։

ԱՄՕՆԱՍՐՕ

Այտայի հայրն ու Եթովպացւոց թագաւորը ։

ՌԱՏԱՄԷՍ, տարօրէն վրդովուած.

Դո՛ւ, Ամօնամսրօն․․․ դու՝ թագաւո՞րն․․․ ։ Աստուա՛ծք, ի՞նչ կ՚ըսէ ։ Ո՛չ․․․ ստոյգ չ՚է․․․ երազ մ՚է․․․ ցնոր մ՚է․․․ ։

ԱՅՏԱ

Բա՛ւ է, ո՛չ․․․ հանդարտէ․․․ լսէ՛ ինձ․․․ սիրոյս վստահէ՛ ։

ԱՄՕՆԱՍՐՕ

Այտայի սէրը մինչ ՚ի թագաւորութիւն մը պիտի բարձրացնէ զքեզ ։

ՌԱՏԱՄԷՍ

Անարգուեցա՛յ․․ ։ Ա՛յտա, քեզի համար հայրենիքս մատնեցի ։



ԱՄՕՆԱՍՐՕ

Ո՛չ, դու յանցաւոր չ՚ես ։ Այս է բաղդին կամքը․․․ ։ Եկո՛ւր, Նեղոսի միւս կողմը մեզի անձնուէր քաջազունք կըսպասեն ։ Այն տեղ սէրը քու սրտի ուխտերը պիտի կատարէ ։

ՆՈՅՆՔ, ԵՒ ԱՄՆԷՐԻՍ՝ մեհեանէն ելնելով, յետոյ ՌԱՄՓԻՍ, քրմունք եւ պահապանք ։

ԱՄՆԷՐԻՍ

Մատնի՛չ․․․․ ։

ԱՅՏԱ

Թշնամուհի՛ս․․․ ։

ԱՄՕՆԱՍՐՕ, դաշոյնով մը Ամնէրիսի վրայ կ՚վազէ ։

Գո՞րծս խանգարելու կ՚գաս դո՛ւ․․․ մեռի՛ր ուրեմն ։

ՌԱՏԱՄԷՍ, կ՚բռնէ զայն.

Կեցի՛ր, անմիտ ։

ԱՄՕՆԱՍՐՕ

Ը՛հ, կատաղի՛ք դժոխոց ։

ՌԱՄՓԻՍ

Պա՛հապանք, օ՛ն անդր, յառա՛ջ ։

ՌԱՏԱՄԷՍ, առ Այտա և առ Ամօնասրօ.

Փախչեցէ՛ք շո՛ւտ ։

ԱՄՕՆԱՍՐՕ, Այտան քաշքշելով.

Եկո՛ւր, աղջիկս ։

ՌԱՄՓԻՍ

Ետևնէն վազեցէ՛ք ։

ՌԱՏԱՄԷՍ

Ո՛վ քրմապետ, ես կ՚մնամ քեզի ։

# ԱՐԱՐՈՒԱԾ Դ

## ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

## ԱՐՔՈՒՆԵԱՑ ՄԷՋ ՍՐԱՀ ՄԸ

Ձախ կողմը, մեծ դուռ մը՝ որ դէպ 'ի արդարութեան ստոր-
երկրեայ սրահը կ'հանէ : Աջ կողմը, անցք մը՝ որ Ռա-
տամէսի բանտը կ'տանի :

ԱՄՆԷՐԻՍ, վրդովեալ, ստորերկրեայ դրան առջև :

Ձեռքէս փախաւ զարշելի թշնամուհիս : Ռատամէս մատնիչի մը արժան պատիժը պիտի կրէ քուրմերէն : Մատնի՞չ, անիկա ... ո՛չ ... : Բայց և այնպէս պատերազմի գաղտնիքը դուրս հանեց : Փախչիլ ուզեց ... փախչիլ անոր հետ, Այտայի հետ ... : Ամէնքն ալ մատնիչ .... : ի մա՛հ, 'ի մա՛հ ... : Օ՛հ, ի՞նչ կ'ըսեմ ... : Կ'սիրեմ զինքը ... կ'սիրեմ և միշտ ..., առանց յուսոյ ... : Անգթայ է այս սէրն որ կեանքս կ'աւերէ : Ա՛խ, թէ կարենար սիրե՛լ զիս, կ'ուզէի ազատել զինքը ... : Եւ ի՞նչպէս ... : Փորձ մը փորձե՛մ ... : Պահապա՛նք, թո՛ղ հոս գայ Ռատամէս :



ՌԱՏԱՄԷՍ ետեւէն պահապաններով, եւ ԱՄՆԷՐԻՍ :

### ԱՄՆԷՐԻՍ

Քուրմերը, վճռակից դատաւորներդ՝ արդէն ժողվեր են : Կրնաս թերևս արդարանալ քու վրայ ծանրացող ահագին ամբաստանութենէն : Ես 'ի քո նպաստ թագաւորին կ'պաղատիմ և քեզ կ'ըլլամ աւետաբեր թողութեան ու կենաց :

### ՌԱՏԱՄԷՍ

Երբե՛ք, դատաւորներն երբէք չպիտի լսեն իմ արդարանալս : Աստուծոյ և մարդկան առջև ո՛չ վատ կ'գտնեմ անձս և ոչ յանցաւոր : Ստոյգ է ... անխոհեմ շրթունքէս խոյս տուաւ այն մահագուշակ գաղտնիքը, բայց սիրտս ու պատիւս անարատ մնացին :

### ԱՄՆԷՐԻՍ

Փախչէ՛ ուրեմն և արդարացի՛ր :

### ՌԱՏԱՄԷՍ

Ո՛չ :

### ԱՄՆԷՐԻՍ

Պիտի մեռնիս :

### ՌԱՏԱՄԷՍ

Կ'ատեմ կեանքը : Բոլոր ուրախութեան աղբիւր ա՛լ ինձ համար ցամքեր են, բոլոր յոյս՝ փարատեր : Մի՛ միայն փափաքս է, մեռնի՛լ :

### ԱՄՆԷՐԻՍ

Մեռնի՛լ ... : Ո՛հ, պէտք ես ապրիլ ... այո՛ ... իմ սիրովս պիտ'ապրիս ... : Քեզի համար արդէն մահու սոսկալի տառապանքը կրած եմ : Զքեզ կ'սիրէի ... ա՛յնչափ տանջըւեր եմ ... գիշերներն արտասուելով կ'անցնէի ... : Քեզի համար, հայրենիք, թագաւորութիւն, կեանք, բոլորն ալ կը զոհեմ :

ՌԱՏԱՄԷՍ

Իրեն համար մատնեցի հայրենիքս ու պատիւս...։

ԱՄՆԷՐԻՍ

Մի՛, ա՛լ մի՛ խօսիր անոր վրայօք ։

ՌԱՏԱՄԷՍ

Ի՛նձ կ'սպասէ նախատինքը, և դու կուզես որ ապրիմ... Բոլորովին թշուառ ըլլալս կ'ուզես ուրեմն...։ Այտա ձեռքէս առնուեցաւ...։ Գուցէ սպաննեցիր զան... և դու իբր պարգև կեանքն ինձ կ'նուիրես ։

ԱՄՆԷՐԻՍ

Ե՛ս... անոր մահուան պատճառ...։ Ո՛չ, ո՛չ, Այտա կ'ապրի ։

ՌԱՏԱՄԷՍ

Կ'ապրի՛։

ԱՄՆԷՐԻՍ

Ցիրուցան փախստականներու մէջ միայն հայրն ինկեր մեռեր է ։

ՌԱՏԱՄԷՍ

Հապա ինքը ։

ԱՄՆԷՐԻՍ

Կորսուած..., և այնուհետև չիք լուր մը ։

ՌԱՏԱՄԷՍ

Աստուածները դէպ' իր հայրենիքն ապահով առաջնորդեցին զինքն անշուշտ, և նա չգիտէ իրեն համար մեռնողին թշուառութիւնը ։

ԱՄՆԷՐԻՍ

Արդ, եթէ ազատեմ զքեզ, երդմնցի՛ր ա՛լ չտեսնել զանիկա։

ՌԱՏԱՄԷՍ

Չ'եմ կրնար ։



ԱՄՆԷՐԻՍ

Ուրացի՛ր զան առ յաւէժ՝ և կ'ապրիս ։

ՌԱՏԱՄԷՍ

Չ'եմ կրնար ։

ԱՄՆԷՐԻՍ

Անգամ մը ևս, ուրացի՛ր զան ։

ՌԱՏԱՄԷՍ

Ա՛նօգուտ ։

ԱՄՆԷՐԻՍ

Մեռնի՛լ կուզես ուրեմն, ա՛նզգամ։

ՌԱՏԱՄԷՍ

Պատրաստ եմ արդէն մեռնելու ։

ԱՄՆԷՐԻՍ

Ո՞վ պիտ՛ազատէ զքեզ, թշուառական, մօտալուտ վիճակէդ։ Կատաղութեան փոխեցիր դո՛ւ, անհման սէր մը...։ Երկին յանձն պիտ՛առնու իմ արտասուաց վրէժն լուծել։

ՌԱՏԱՄԷՍ

Մահը՝ երկնային բարիք մ'է, եթէ Այտայի համար մեռնելու շնորհն ինձ տրուի։ Սիրոյս այն դաժաներ ճակատագիրն կրելու անպատում բերկրութիւն մը պիտի վայելէ։ Ո՛չ ևս կ'վախնամ մարդկան բարկութենէ, կ'վախնամ մի միայն գթութենէդ։ (Կ'հեռանայ պահապան զօրքերով և կ'մտնէ գետնափոր սրահը։)

ԱՄՆԷՐԻՍ, արտասուաթոր կ'ընկնայ աթոռի մը վրայ .

Վա՛յ ինձ..., 'ի մահ կ'տագնապիմ...։ Եղո՛ւկ, ո՞վ պիտ՛ազատէ զան. և ե՛ս ըրամ զինքն անոնց ձեռաց մէջ նետողը...։ Հիմակ, կ'անիծեմ զքեզ, ո՛ անագորոյն նախանձ, պատճառ անոր մահուան և իմ սրտի յաւիտենական սուգին։ (Մէկդի կ'դառնայ ու կ'տեսնէ դահիճները որ գետնափորին մէջ ... կ'անցնին, գետնափորը մտնելու համար ։) Ինչ կ'տեսնեմ։ Ահաւասիկ մահաշշուկ գործադիրներն, մահուան անգութ պաշտօն-

թաներն ։ Բա՛րէ , չտեսնեմ սա աղետաբեր ուրուականները ։
(Ձեռքով երեսը կ'ծածկէ ։)

ՔՐՄՈՒՆՔ , տխրերգելէն ծէ.

Հոգի՛ երկնային , իջի՛ր մեր վրայ , շողացո՛ւր մեր մէջ յաւիտենական լուսոյ Ճառագայթը ։ Մեր շրթունքներով յայտնէ՛ արդարութիւնը ։

ԱՄՆԷՐԻՍ

Ա՛ստուածներ , գթութի՛ւն իմ մորմոքեալ սրտի ։ Արդար է անիկա ։ Ազատեցէ՛ք զինքն , ո՛վ աստուածներ ։ Յուսակտուր դողդոջուն է կսկիծս ։

ՌԱՄՓԻՍ , ներսէն ։

Ռա՛տամէս , Ռա՛տամէս , հայրենեաց գաղտնիքն օտարին տուիր ։

ՔՐՄՈՒՆՔ

Արդարացի՛ր ։

ՌԱՄՓԻՍ

. . . Կ'լռէ ։

ԱՄԵՆՔՆ

Ո՛վ մատնիչ ։

ՌԱՄՓԻՍ

Ռա՛տամէս , Ռա՛տամէս , պատերազմէն օր մ'առաջ զինւորական պաշտաւորութենէդ փախչեցար ։

ՔՐՄՈՒՆՔ

Արդարացի՛ր ։

ՌԱՄՓԻՍ

. . . Կը լռէ ։

ԱՄԵՆՔՆ

Ո՛վ մատնիչ ։

ՌԱՄՓԻՍ

Ռա՛տամէս , Ռա՛տամէս , հաւատքդ անօրինեցիր , երդմնազանց ես հայրենեաց՝ թագաւորին՝ և պատուոյ ։



ՔՐՄՈՒՆՔ

Արդարացի՛ր ։

ՌԱՄՓԻՍ

. . . Կ'լռէ ։

ԱՄԵՆՔՆ

Ո՛վ մա՛տնիչ ։ Ռատամէ՛ս , վճիռդ տրուեցաւ ։ Վատշուիրաց վայել մահն ունենաս պիտի զայրացեալ աստուծոց բագիններուն տակ ։ Ո՛ղջ ողջ քու վրայ գերեզմանը պիտի ծածկի ։

ԱՄՆԷՐԻՍ

Անո՞ր . . . ողջ գերեզմա՞ն ։ Ա՛յ , անօրէննե՛րը . . . ։ Բնաւ չ'են կշտանար արիւնով ու երկնի պաշտօնեա՞յ կանուանին ։ (Քահանաներուն դիմելով, որք կ'ելնեն ստորերկրեայ սրահէն ։) Ո՛վ քրմունք , եղեռն մը կ'գործէք ։ Ո՛ արեան ծարաւի վագրեր , երկիրն ու աստուածները կ'թշնամանէք . . . ։ Անմեղ մը կ'զարնէք ։

ՔՐՄՈՒՆՔ

Մատնիչ մ'է , պէ՛տք է մեռնի ։

ԱՄՆԷՐԻՍ , առ Ռամփիս ,

Ո՛վ քրմապետ . այն անձն զոր կ'մեռցնէք , գիտես . . . երբեմն սիրուեցաւ ինձնէ . . . ։ Քու վրադ պիտ' ընկնայ մորմոքեալ սրտի մը նզովքն անոր արեան հետ ։

ՔՐՄՈՒՆՔ

Մատնիչ մ'է , պէ՛տք է մեռնի ։

(Ծանրաքայլ կ'հեռանան ։)

ԱՄՆԷՐԻՍ

Ո՛վ անօրինաց ծնունդք , նզո՛վք , անէ՛ծք ։ Ձեր վրայ իջնէ երկնի վրէժխնդրութիւնը ։ (Կ'ելնէ յուսահատ ։)

# ԵՕԹԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

## ՏԵՍԱՐԱՆԸ ԵՐԿՈՒ ԴԱՍՏԻԿՈՆԻ ԲԱԺՆՈՒԱԾ

*Վերնայարկը Վուլքանի մեհեանը կ'ներկայացնէ ճրագներով լուսաւորեալ։ Վարի յարկը ընդարձակ գետնափոր մը կ'ներկայացնէ ։ Կամարներու երկայն շարք մը մթութեան մէջ կ'անհետի ։*

**ՌԱՏԱՄԷՍ** ստորերկրին մէջ, սանդուղին աստիճաններուն վրայ, ուսկէ կ'իջնէ : Վերը՝ երկու **ՔՐՄՈՒՆՔ** որ կ'ջանան գետնափորին վէմը գոցելու :

ՌԱՏԱՄԷՍ

Մահաշունչ վէմն իմ վրայ կ'գոցուի ։ Ահաւասիկ գերեզմանս ։ Ոչ ևս պիտի տեսնեմ արեգական լոյսն···։ Ոչ ևս պիտի տեսնեմ Ա՛յտան···։ Ա՛յտա, ո՞ւր ես ։ Երանի՛ թէ կարենայիր երջանիկ ապրիլ և չգիտել միշտ իմ սոսկալի ճակատագիրն···։ Ի՞նչ հեծեծանք է այն···։ Ուրուական մը···, տեսի՛լ մը···։ Ո՛չ մարդկային կերպարան մ'է···։ Ո՛վ երկին···, Ա՛յտա ։

ԱՅՏԱ

Ես եմ ։



ՌԱՏԱՄԷՍ

Դո՛ւ··· այս գերեզմանին մէջ ։

ԱՅՏԱ

Սրտիս մէջ նախատեսելով քու դատակնիքդ, երեք օրէ 'ի վեր հոս կ'սպասեմ քեզ. հեռի՛ ամեն բանէ, թեւերուդ մէջ կ'ուզեմ մեռնի՛լ ։

ՌԱՏԱՄԷՍ

Մեռնի՛լ, այսպէ՛ս անարատ, այսպէ՛ս գեղանի ։ Մեռնի՛լ սիրով ինձի համար···։ Խո՛յս տալ կեանքէ այս ծաղիկ հասակիդ մէջ ։ Երկին ստեղծեց զքեզ մի միայն սիրոյ համար, և իմ սէ՛րն քեզ մեռցնէ···։ Ո՛չ, ո՛չ··· Ա՛յտա···չ'պիտի մեռնիս դու···։ Ա՛յնչափ կ'սիրեմ զքեզ····ա՛յնչափ դու հրաշագեղ···։

ԱՅՏԱ *'ի զառանցանս,*

Կ'տեսնե՞ս մահուան հրեշտակն նշուլափայլ կ'մօտի մեզ ։ Իր ոսկեշող թեւերուն վրայ կ'տանի զմեզ դէպ 'ի յաւիտենական երանութիւն ։ Արդէն բաց է երկին մեզի համար, այն տեղ կ'դադարին ա՛լ բոլոր կսկիծ, այնտեղ կ'սկսին յաւերժական սիրոյ սքանչանքը ։

*(Վերը մեհեանին մէջ, քրմուհիներուն երգն ու պարը ։)*

ԱՅՏԱ

Ի՛նչ տխուր երգ····

ՌԱՏԱՄԷՍ

Քուրմերուն ուրախութի՛ւնն է ։

ԱՅՏԱ

Մեր մահու օրհնութի՛ւնը ։

ՌԱՏԱՄԷՍ

Օ՛հ, թէ բազուկներուս ուժն բաւական ըլլար սա մահափակ վէմը վերցնելու ։

### ԱՅՏԱ

Ի զո՛ւր կ՚ձգնիս ։ Ամե՛ն բան... երկրիս վրայ... ա՛լ մեզի համար վերջացաւ...։

### ՌԱՏԱՄԷՍ, *անյուսաբար կերպիւ և յուսահատ* ։

Ստո՛յգ է, ստո՛յգ է ։ (*Այդպէս մօտեցող կ՚վերցնէ զան* ։) Մնասցե՛ս բարեա՛ւ, ո՛վ երկիր....։ Մնացե՛ս բարեա՛ւ, ո՛վ արտասուահոս հովիտ, ո՛վ ուրախութեան երազներ՝ որ ցաւերու փոխուեցաք...։ Երկին կ՚բացուի մեզի համար... և, մեր հոգիները... կ՚սաւառնին... դէպ 'ի յաւիտենականութիւն,

(*Այիտա մեղմիկ կ՚իյնայ Ռատամէսի բազուկին մէջ* ։)

### ԱՄՆԷՐԻՍ

(*Կ՚հանդիսանայ մեհենին մէջ և ծունր կ՚դնէ գերեզմանաքարը ծածկող տախտին վրայ* ։) Ո՛վ սուրբ նահատակ, խաղաղութիւն կ՚հայցեմ քեզի համար ։ Ինձ կ՚մնայ դառն արտասուաց յաւիտենական աղբիւրը ։



ՀՀ Ազգային գրադարան
NL0242273